

ԱՂՔԱՏԻ ՀԱՂԸ

Ըստանից խնդրեմ հեռաց օրըն ընկհես,
որ պատան փթաթանդ էլ պարտքով առնես:
Ժող. անհոք:

Ա.

Սիրտ ուսող վաշխառուները Կ. գիւղացի Մէջլում ապինումն էլ հալ չէին թողել: Անիրաւները կարծես թէ փրթանոց մոլորճ վրաբերած լինէին խեղճի մէջքին, որ էլ չէր կարողանում դռել:

Հարկի, կող ու բեգիառի համար մի անգամ երեք մանէթ տուողը շահին էլ շահ առնելուց ամենւին չէր կրչտանում, այլ՝ արնածարաւ հարամի տղրուկի նման դունչը մերկ աղքատի բուգը խրած շարունակ ծծում ու ծծում էր, որ արնաքամ անի նրան: Հէնց պղպիսի ուռած ու տռած, աչքները տրաքուած անգուլթներն էին պատճառը, որ Մէջլում ապին տարին տասներկու ամիս՝ օր ու գիշեր արիւնքրտինք գցելով, անդադար քար ու փայտ կրծելով, չարչարում, հալում, մաշում, աշխատում էր, բայց էլի ետխէն պատռած, ծունկը ծակ էր մնում, հացը, կորեկ ու գարի, թիբէն ցամաք և ծանր պարտքը շլինքին ու շինքին...

Մարդ, երբ սիրտ էր անում նայի խեղճ Մէջլումին, կարծում էր, թէ իւր առաջ գիշատիչների ճանկերով բլբլած, թեփռահան արած մի ճնճղուկ է տեսնում, այնքան լանձիլանձի բրբրուած էր նա՝ թէ շորով և թէ մարմնով: Շատ անգամ սևասրտած Մէջլում ապին այսպէս էր դարդահալ լինում իւր նմանի հետ, իրենց դառը ցաւերի մասին զօրոյց անելիս:

—Ա՛խ, Մէլիք ջան, էլ ասում ես, թէ ի՛նչ անես.

մազս սիպտակեց, աչքս վրա՝ մնաց, որ մի անգամ էլ ես մի
թաղա ըրեսայուղ կիենամ, ու, մի Ասծու կիրակի օր՝ ըրի-
սիս խշհանիլու հըմար եղեցի մտնեմ, ես թէ չէ, մի մա-
նէթ փող, ես մի ուսկամբ ջիւս դրած մի հրսանիք գնամ,
— սրտալի մարդամէջ դուս գամ, որ ասեն թէ՛ սա էլ մարդ
ա. սա էլ ուրախանալ գիտայ... Անտէր խարջի ու բէգիա-
ռի համար խո՛ւ. երոր գեղամէջ են կանչում, կանես թէ
միսս վրէս վեր ա թափւում— էլ ինձանում հալ չի մնում,
թամամ հալածակւում, կէս մարդ եմ դառնում,— ոչ ո՛սս
ա նոր, ոչ էլ գլխիս փափախ կայ: Ըրիցի տարածնիս (չո-
րերս էլ) էլ՝ հրէս, հրէս՝ մի հլա մտիկ արա՛. թամամ ձը-
մեռուսյ գոմի դռան ծակուծուկը կոխելու լանթեր են դա-
ռել,— տխուր, տրտում, ուքերից կախկտուած ձանգերից
բռնելով և բաց ծունկը թոյց տալով, ասեց խեղճն ու մի
ծանր հոգոց բաշեց:

— Է՛, — գլխին պտտելով ասաց նրա ունկնդիրը, — ան-
տէր լի էսթաուր ապրիլը, մթամ մընք էլ ապրում ենք.
հա՛ դէնա դժոխքի չըջարմունք ա, քաշում ենք, էլի:

— Բա ի՛նչ, — ձեռներն իրար կցելով, պատասխանեց
Մէջլում ապին և մի առ ժամանակ երկուսն էլ լռեցին
տարուածի նման:

— Մէջլում ջան, ասում եմ հալբաթ ըսէլ ա Ասծու
արած բան, էլի...

— Ո՞րը:

— Է՛ն, որ գող Գիգինի աղի թիքիցը եղը ծորի պէս
ծլծլւմ ա, մերն իսկի ցամաք էլ չի ճարւում:

— Վա՛յա՛հ, Ա՛րթին, էսղայդի ապրիլուցը ես մեռնի՛ն
աւելի սալահ եմ տենում քանց ապրիլը, միան բողաղում
մնացած ոսկոռի նման մի անտէր դարդ ունիմ սրաբմա, թէ
չէ հըմի ես բայեաղ (վաղուց) ի մեռել, հա՛...

— Գարդդ ընեքդ կլին, էլի:

— Հա՛. Ոչ հէ՛ր ունեմ, ի՛չ աղպեր, վախում եմ, թէ
մեռնեմ, ինձանից եղը ընեքս անտէր մնան, պահող չլի...

— Է՛հ. ի՛նչ ասեմ, աղպեր, դրուստ ես ասում. ին-
սանաթմն էլ մրուաթ (խղճմտանք) չի մնացել, մեռնիլուցդ
եղը՝ եղանն առած չափարդ են ետ տալու, քլունգն առած
պատերդ են քանդելու...

— Մթամ թէ դու դրուստ չ'ասեցիր, աչքիս զաբին չի Թմրադի տղի էնթաճուր խնամքով շինած տան տեղը. — Խեղճը չըջարւեց, չըջարւեց, եդոյ հէնց գլուխը վե դրեց թէ չէ, օճորբը ետ տուին, աւերեցին ու պակըմէ էլ սխտոր ցանեցին... հէյգիտի հա՛...:

— Հա՛. խեղճ մարդին մի կէնտ իշատակ (յիշատակ), մի մինուճար էլ մնաց, որ հօր ծուխը ծխի. ընտուր էլ էնքան բեօխվի ու գզրի դգեանակի տակը գցիլ տուին, էնքան՝ իր տեղն էլ, ուրշի տեղն էլ կոռ ու բեգիառ դրին բարակած շնքին, որ լիս դառած հօրից եդը կէնտ իրեք տարի զոռի ապրեց:

— Ե՛. մենակ մեռնելու օրը չգիտամ, թէ չէ մեր գեղի լենուէն գիլանոնց առամբին վաղուց եմ հըմբարել, հա՛...:

Ապագայի մասին էլ այդպէս խեղճ-խեղճ խօսեց Մեջլում ապին, որի կմախք դարձած դէմքին նայող կարեկիցն արդարեւ, չէր կարող սառնասիրտ մնալ — չխղճալ և չարտասուել: — Ուրախ օր, առատ աչք չ'ունեցած երբեք, միշտ մերկ, պարտքի տակ, մտրակի դաղը մէջքին, ընտանեկան ծանր հոգսերը բռնան պէս բարձուած, ծանրացած ուսին, և, մի օր՝ կիսակուշտ, հինգ օր անօթի ու քաղցած մնալով, բարակել, ցամաքել, դեղնադուլնել ու չոր ոսկր էր դարձել նա տեղն ու տեղը: Այն դրութեան մէջ, նա շատ անգամ նոր հագուստով ընկեր-հարւանի պատահելիս՝ մայր մտած աչքերը ամօթխածութեամբ տալին էր կ'ընում և այնպէս անցնում մօտովը. կարծես ինքն էլ չէր ուզում իրեն վրայ նայել... Այն դառնաղէտ բեռիքը հարկն ու բեգիառը բաշելուց յետոյ՝ ծարած միքանի կոպէկ մշակավարձն էլ կնոջ ու երեխանց վրայ անելով, ինքը դարձեալ մնում էր արեւում այրուելիս և կամ ցրտում վրվթալիս:

— Ես ջհաննամը, ոնց որ լի, եօլա՛ կը գնամ. թող հլէ օղլուշաղիս ձեռնուոտն էլա ծածկած պըհեմ, կնիկարմատ ա, — ասում էր նա: Իսկ, երբ նկատում էին, թէ ինչո՛ւ մի նոր՝ գոնէ կտակէ շապիկ չի առնում, հագնում. նա խիստ դառնացած պատասխանում էր:

— Ա՛յ աղպէր, այ՛ ջանըմ, որ ասըմ էք թէ՛ ան. արի ընչով առնեմ. վեր ընկած տեղէս ըսկի կարըմ եմ վեկեւամ, որ առնեմ: Վա՛յ, վա՛յ, վա՛յ. ձեր խէրը շատ լի.

ա՛, բա հէ իմ սիրաւը չի ուզում, որ մըհեա էլա եախէս նորեմ...

Այդպէս, արևի էրած, ցրտի տարած Մէջլում ապին մէջքը կուացրած շարունակ ապրուստի, աւելի պարտքի համար՝ տանձի կոթի պէս բարակած շինքը բեռը բաշող եղան պէս ձգած՝ սրա նրա հողում հնձում, տակոի էր հանում և կամ, գոմի, մարագի պակ կտրելով, ուզում էր մի կերպ իւր չիփլախ երեխայքը սովից, չոռից ու ցաւից ազատի՝ մեծացնի, որպէսզի պոսեղ-պնտեղ ծառայ տայ՝ ապրուստն ու պարտքը փոքր ինչ թեթեւացնի նրանց բերած միբանի կոպէկով, սակայն, աչքը բաց ժամանակ խեղճ աղբաւը գէթ այդ նպատակին էլ չըհասաւ...

Մէջլում ապին, լծնափախ տուող եղան պէս, շատ անգամ՝ երեկոյեան ո՛ւշ տուն դառնալով, առաւօտեան ժամանակից վաղ վեր կենալով, պարտատիրոջից փախուստ էր տալիս, որ մէջեմէջ իւր գործերից գոնէ մինն ուղղէ, բայց մի առաւօտ բնով ընկնելով, խեղճը յանկարծ վեր թռաւ տեղից և տեսաւ, որ լուսացել է։ Նա ահը սրտումը հարաքաթ արաւ, արեւները մի կերպ ոտներն առաւ, երկու չոր ճաթի հաց, մի ձուիկ քացախ և մի քանի կեռիք սխտոր խուրջինը գցեց, մանգաղն առաւ և հէնց ուզում էր գլուխը շէմքից հանի ու ապտապ անելով ճանապարհ ընկնի դէպի իւր գարու արաւը, յանկարծ թմբի գլխից մի գոռ բայլունչի ձէն լսելով, հարուած ստացածի նման ինքն իւր մէջքը բըռնեց ու բացահանչեց։

— Վա՛յրէ՛ բու ձէնն Աստօծ կտրի, մէջքս խի կոտրեցիր։ Վա՛շ գարիս փչացաւ, կորաւ, կծղե՛ց, վա՛շ...

Թմբի գլխինը Վ. գիւղի գայլատամ վաշխառուն էր։ Նա հպարտ-հպարտ, ձեռները ետեւին էր դրել և անգուժի սև կերպարանքով՝ գառանը դիտող գայլի պէս վերեւից նայում էր դէպի աղքատի խրճիթը և ձէն տալիս դաժան-դաժան։

— Ա՛յ ախճի, ա՛յ ախճի. Սա՛րգիււ, Սա՛րգիււ. ախճի Մէճլումին ասա աղէն ասըմ ա ուրիշ տեղով զրաղ չլին, էս շաբաթ պարտքի ղուա (կողմից) պէտքա մեղ համար հունձ անես. իմացա՛ր։

— Հա՛։ Միսակ ջան, Միսակ. էս չեսսկան իմ. էն սըր-

տամեռին ասա կ'ասեմ, ճամա եաւաշ տենամ Մէջլումը տա-
նըն առ:

Խեղճ Սարգիւլը մի փոքրիկ տղայի երեսն առնելով,
նրա բերանով խօսեց գայլի հետ և աշխատեց մի կերպ խա-
բել, հեռացնել նրան, որպէսզի Մէջլումը կարողանայ ազա-
տուի նրանից և իրենց բանին կենայ: Երեխան չակերտնե-
րիս միջի խօսքերը հաղորդեց վաշխառուին թէ չէ, անպի-
տանը բարկութեան թոյն թափեց վերևից:

—Ա՛խճի, ա՛ լաչաւ. բա ո՞ր ջհաննամին ա, որ ասում
ես՝ ճեաւաշ տենամ...», հրէդ ձեր պրիշակձի, էլի (աւե-
րակումը): Ասա դո՛ւս գայ, թէ չէ հրէս կըգամ գլխներդ
փուլ կածեմ:

Խեղճ կինը երկիւղից թւերն իրեն քաշած ճուտի պէս
տուն քաշուեց մըմըլալէ:

—Ա՛յ, բու մրուաթն Աստօծ կտրի հա՛. բա որ էս
խեղճը ձե՛զ հունձ գայ, մե՛րն ո՛վ հնձի,—ասաց վաշխառուին
և ապա ամուսնուն դարձաւ:

—Ի՛, ա՛ խեղճ ու նաչար, մէջքդ բռնել, մնացել ես
կաղնած, թէ ի՛նչ անես, հրէ եկել ա գրողի պէս վերևը
կաղնել, հրէ...

—Օ՛հ, ես դրա հէ՛րն անիծեմ: Բա հըմի ո՞նց անեմ,
ա՛ կնիկ—թէ գնամ, երկու խանէն տեղ գարուս պատառը
կծղելու, կորչելու ա, թէ թւքաշ տամ, չգնամ, վախում եմ
էս անիրաւը ինձ բօխվի ըռէխը գցի, ետոյ մի թաղար
գարի էլ նրան պարտ մնամ. ո՞նց անեմ, հը՛...

—Ի՛հ, դրա սրտի ծէրը սև անեմ. եա՛րաբ ի՛նչ կլի,
որ թողայ մերը պրծնես, ետոյ կանչի,—սրանեղած ասաց
Սարգիւլը շուարած Մէջլումին, որ մտածում էր գեռ:

—Սարգիւլ, թող ես ծալքի տակը մանեմ, տապ անեմ,
դու դուս արի ասա՝ Մէջլումը տանը չի, բալի ըռադ լի,
գնայ,—ասաց Մէջլումը, բայց այդ ժամանակ վաշխառուն
ոտները գետինը թակելով պնպէս հերստած թնդաց կրկին,
որ խեղճերի խրճթի կտրից հող թափուեց գլխներին:

—Մէջլում, էհէ՛ Մէջլում, ա՛ հայվանի տղայ. ա՛, խը-
լուել ես, մոշուառ մտած զալբ եղան պէս քանդուածումդ
տա՛ղ ես արե՛լ...,—այս և ուրիշ լպիրշ հայհոյանքներով
վաշխառուն կամաց-կամաց արդէն իջնում էր դէպի խըրճի-

Թը, երբ Սարգիսը գլուխը շէմքից հանելով կրկին ներս առաւ ու ասաց մարդուն:

— Նրա կոմքալ գլուխը թաղեմ, է՛հէյ, հրէ գալիս ա. արի դու գլուխդ ղալմաղալի մէջ մի՛ գցիլ, դուս արի, ասա կը գամ, — ահամայից խորհուրդ տուեց կինը: Մէջլումը դուրս գալով և միքանի հայհոյանքներ և՛ ընդունելով նրանից, խօսք տուեց գնալ:

— Վայիս մարդ ա, ա՛ կնիկ, լաւ ասեցիր, թէ ղալմաղալի մէջ կը գցի, գնամ հունձը տամ, մնայ էն եաղու մնացած թաղար ու կէս գարին, ընէլ բողազներիցս ետ կը քաշենք, որ ըռադ անենք գլխներիցս, — ասաց Մէջլում ապին ու նեղութիւնից պատի տակ շարտած մանգաղն ու գողդին վեր առնելով, ճանապարհ ընկաւ դէպի Կեռղօբին, ուր գտնուում էր այն վաշխառուի արաւը, որը Մէջլումից տասն ռուբլուն՝ իբրեւ երեք տարուայ տոկոս, ստացել էր վեց ռուբլի կանխիկ դրամ, մի թաղար (վեց փութ) գարի, հինգ հաւ և դարձեալ պահանջում էր — երեսուն տասնեակի հունձ (տասնեակն արժէր 25 կոպէկ) և թաղարուկէս գարի՝ այն էլ մաքուր խախալած:

Մէջլումը գողդին ուսին, մանգաղը կռանը գիւղից դուրս եկաւ, առաջի ձորը մտաւ և այնտեղից դուրս գալով, ափային դէմ առաւ, վերջապէս երեաց հեռու մի լանջի վըրայ, ուր նրա հետ գնում էին նա՛ն ուրիշ շատ հնձուորներ: Նրան նկատելով վաշխառուն, յանկարծ կրկին որոտաց ետևից:

— Մէջլում, Մէջլում, Մէջլում, է՛հէ՛ Մէջլում. ա՛, շոգն ընկաւ, էդ ո՞նց ես գնում, ոտներդ խի՛ չես լեղով (արագ) փոխում, կոտրուած ե՞ս...

Մէջլումն ահանջաբառի էր տալիս կարծես, իբր թէ չէր լսում նրա ձայնը, աշխատում էր մի կերպ շուտով բլրի ետևն անցկենալ:

— Մէջլում, Մէջլում, ա՛ թիւմբաթիւնի տղայ, մանում չե՛ս, — փորը պատռելու չափ ուժեղացրեց ձայնը:

— Այ չոռի է մեծը քե՛, — ասաց ցածր ձայնով, — դէնա գնում եմ էլի, — այս անէծքով խեղճ Մէջլումը կարծես փոքր ինչ սիրաւ հովացրեց և լուռ ու վրդովուած հայեացքով կանգնեց ու ետ նայեց միայն:

—Ա՛հա, ես բրաուդը եմ անըմ տենըմ, որ դու շատիդ ոտնակախըմ ես, անսիրտ ես գնըմ, ու անսիրտ էլ հնձիլ դես, ամա էս ա ասըմ եմ, ա՛յ, արտա պետքա թամուզ հնձես—կոխ չտաս, հասկ չթողաս, թէ չէ՛, փշերի, տատասկների մէջ էլ որ թո՛ղած լես, հաւի նման գնչովդ հըւաքիլ եմ տալու. իմացա՛ր, ինչ ասեցի, գիւղից դէպի լանջը գողոււմ, աղաղակում էր վաշխառուն, իսկ երբ ձայնը կտրեց, Մէջլումը ճանապարհը շարունակելով կրկին մրմնջաց.

—Ա՛խ, ա՛ որդամեռ, —ասաց նա, —որ տհէ բոլի արջի պէս գողգողըմ ես, մի հլա թխպած սրտիս էլ մտիկ արա, է՛: Այ անըծւի՛ օսալ բաղդը, սօրուայ օրը մի տուն լիքը քիւլփթատէր մարդն էլ իրանը թողած ուրիշի հըմար հունձ կըգնայ, ա՛խ...

—Ո՛վկէ՛, խեղճ Մէջլում, սօր էլ չի իրան հունձ գնըմ հա, —վաշխառուի անձոռնի ձայնը հատնելուն պէս այս ու այն կողմից խղճացին լսողներից ոմանք և աւելի ևս յուզեցին Մէջլումին, որն այնքան ընդարձակ ձորերն ու ցաքուաներն անցնելու ժամանակ այնքան խորասուզուել էր իւր ցաւերի մէջ, որ երբ աչքը բարձրացրեց, տեսաւ Գեւղօրին է հասել, կարծեց թէ՛ երազումն է. Վայ՛, էս կրակ ընկնիլուն եմ հասե՛լ, —ասաց զարմացած և կամաց-կամաց մօտենալով, կանգնեց, նայեց արաին և կրկին բացականչեց. —Ո՛հ, կրակ ընկնի սա, էս ի՛նչ կառնուպ ա. անտէր փշերը լաշս լափիլու են: Հը՛հ, էն որդամեռն ընդուր էր գրողի բուղի՛ (ցուլի) պէս կաւիցս բղաւըմ թէ՛ թամիւզ հնձի հա՛: Էս խու թամիւզ հնձիլու համար ես պետքա տասն օր ըստի նստեմ. բա իմը՞: Ա՛խ, էրնակ րեխանցս դարդը չլի, հրէս տաղարած, ձեռաց գլխվերեմ հա գետն ընկնեմ, —հեռուում վշտան Աղստեին նայելով, շշնջաց նա և առջակապը շլինքը ձգելով, մանգաղն առաւ արաը մտաւ սևասրտած ու սկսեց սոված արածող եղան նման խշտացնել:

Բայց դեռ մի ժամ չ'անցած, ձին քշած եկաւ վաշխառուն, շտապով իջաւ և առանց ողջունի, յօնքերը աթած մտաւ հնձած արաը և ասեղ փնտռողի նման ծղնօտների միջից մի քանի մկնահատ, վտիտ հասկեր գտնելով, թռուսա-

վից դէմքն պլաշելով տարաւ Մէջլումի աչքին դէմ արաւ
և զպրանալով, թքոտալով հնձին արգելեց:

— Էս ինչ բան ա, էս ինչ ես արել. էսքանը որ թո-
ղել, կոխ ես տուել, էլ ինչ ես հնձել ինձ համար. ես
քե վէջ եմ տուե՛լ. նաղդ փող եմ տուել, նաղդ. իստակ
հնձրմ չեմ, հնձիլ մի. գնա, գնա փողս բեր, որ ես մի
հալալ մշակ բռնեմ, գնա, հարամթոխըմ, ըռաւօտն էլ ես
չէր մտիկ տալի վրէս:

— Ա՛ղայ, մեղք եմ, ի սէր Ասծու, թող հնձեմ, որ
պարտքս տամ, իրեք տարի ա քեզ մի թիւմանի եսիր եմ
դառել: Ա՛ղայ, ռեխեքս սոված են, գարուս ծլաքը կը կծղի,
կկորչի, թո՛ղ, թէ բու որդու արեւը կսիրես, — ձեռը դէմ
անելով, աղաչում էր Մէջլումը, իսկ նա հրելով աղքա-
տին շարունակում էր փողն ուղել:

— Զէ՛, չէ՛, — ասում էր նա, — բու հնձին ուղըմ չեմ,
գնա՛, գնա կարմիր թիւմանս բեր. արաս զասիդ կոխ ես
տալի, գնա՛, կորի՛...

— Ա՛ղայ, Ասած վկայ, որ կոխ չեմ տուել, էդ հաս-
կերը մկան, մորեխի կարած են, զասիդ չեմ թողել, թող
հնձեմ...

— Է՛՛հ՛հ՛. չէ՛ եմ ասըմ, էլի. գնա՛, կորի, — աւելի
հերոսուեց, խեղճի մանգաղը խեց ձեռից, դէնը շարտեց և
վզին տալով, դուրս արաւ հնձածից:

Մէջլումը ձեռները ծոցը դրեց և խղճացած մէջքը
մի բարի դէմ արաւ ու աչքերը երկինք բարձրացնելով,
բացականչեց.

— Ո՛վ, Ասած, եանի սրանից դէնն էլ դառն օրե՛ր,
ա՛խ, եարաբ մեղքս ինչ ա, որ սհենց չըջարըմ ես, հոգիս
ընչի չես առնըմ, որ պրծնեմ էս ըշխարհից...

Այդ բացականչութեան հետ նրա արտասուքը խառ-
նուելով քրանքին, արնագոյն գլուխներ սահեցրին չորացած
պտերի վրայից:

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ. ա՛ օրինած, բա դու տե՛նըմ չես
իմ հալը՞, տենըմ չես արնալուկի լաշը՞ս. թող էլի, որ
պարտքս տամ, — կրկին դառնալով անգուծին, ասաց Մէջ-
լում ապին:

— Ա՛, Մէջլըմ, խի՞ ես լաց ըլըմ ռեխայ հու չես. ա-

շայ մարդ ա, չարացել ա, դու ա անըմ, հրէս չարութիւնը վեկնասի, էլի կհնձես, ինչ դի ասիլ, որ թողայ ոչ, — հարեան արտից քաջալերեց մի ուրիշ հնձուոր և դառնալով վաշխառուին ասեց.

— Աղայ, մեղք ա, թող հնձի. ես վկայ լեմ թող, եթէ էլի հասկ թողայ, հնձածը հնձած չհաշուես:

— 2է. էիլ չի, ըսաւօտն էլ ետեկիցը կանչեմ ի, ըսխիս անկաճ չէր դնըմ, թող գնայ խրատուի:

— Միւննաթ եմ անըմ, աղայ, միւննաթս տափը մի գցիլ, ես էլ եմ պէտքական մարդ, մի օր էլ դո՛ւ ինձ մի բան կասես, կլսեմ. թող որ հնձի, — կրկին խնդրեց դրացին, իսկ նա դարձաւ Մէջլուսին և մատը վրան թափ տալով ասաց.

— Տէս. Սիմոնի խաթեր քե թողըմ եմ, որ հնձես, միայն շատ թափուղ պէտք ա հնձես, թէ չէ, բեօխլի դաքին ուղտի պէս կձկնացնեմ, ետոյ կառնեմ թիւմանս, ըսպառնաց նա և ձին հեծնելով անցաւ բլրի միւս կողմը, ուր նրա մի ուրիշ ընդարձակ հողում յիսնաչափ մշակ էր բռնում:

— Ա՛խ. Վերնէյին աէր. Վերնէյին Աստօծ. մեղաւոր բերնովս ասեմ, արդար ընգաճովդ լսես. էս արինքրախնքով հնձածս իրան ջուխտ որդու համար չուել տարուայ գլուխը մուհաց (բելխ) թխիլ տաս, — պրուած սրտից խօսք ուղղելով Աստուծուն, վաշխառուին անիծեց Մէջլումը և ապա այսպէս ասաց. ձեթէ հարաքեաթ չանեմ էս կրակ ընկածըմ, գարիս էս շարթուայ ճճեքած արեին դիմանալ չի. յուսատեղս էն ա. ինչ կլի, կլի՝ արի ուժ տամ կըռնեիրիս, ասաց ու հարաքեաթ արաւ...

Բ

Ըստանեկան դառն հոգսերն այնքան ծանրացել էին Մէջլումի սրտին, որ մի րոպէ անգամ չէր մտածում, թէ իւր եղած ուժն էլ կսպառի և առողջութիւնը յանկարծ կքայքայուի: Նա աչքի տակն էր կալել երեքհարիւր խորձը երեք օրում հնձի: Կոյ միւննոյն էր, թէ մի բեռնակիր, որ կարող է կրել իննը փուլթ, մենք նրան բեռնում ենք քսան: Մէջ-

լուսմը քանի նոր էր արաք մտել, տանում էր ոնց որ էր, բայց հետզհետե, կէս ճանապարհին ծանր բեռան տակ ճըկ-
ռող բեռնակրի նման, թլանալով, թւում էր, թէ մի տեղ
պիտի ընկնի ու անբայ:

Առաջին օրը լաւ էր — ութսուն խոճան երկու վար վեր
գցելուց յետոյ միայն թլացաւ և զգաց, որ մինչև այդ րո-
պէն հացի պատառ չի դրել ատամի տակը:

— Ո՛հ, բոլ ա, սովեցի, — ճակատի բրտինքը բերելով,
մէջքը դռեց նա և ծանր քայլերով մի նոսրաստուեր ցաքքու-
տակ քաշուեց, գոգուց պաշարը հանեց, սետորը թակեց
ամանում, բացախը վրէն ածեց և գարի բորբոսնած չոր պա-
տառները մէջը բրթելով, կերաւ ու տակի մնացորդ բացա-
խըն էլ վրա քաշեց խմեց ու առանց հանգիստ առնելու,
կրկին մտաւ խոտալից արածը, ուր օրուայ այն պէլացած շո-
գին մազաշարժ քամի անգամ չէր խաղում, այնպէս որ, Մէջ-
լուսմը առպից հազիւ էր շնչում. բափուքտինքը հեղեղել էր
նրան և լանթերը մզում էին ջրում: Անճարը գլուխը թաշ-
կինակի փոխարէն խոտով էր փաթածել, նմանապէս վա-
րուել էր նաև ոտների հետ, որովհետև գուլպէք չունէր.
եղած պաճիճներն ու հալածի լանթն արդէն ցեցի կերած
էին դարձել, իսկ այն բրքրուած տեղերին քիտը, ծղօտը
կառն ու տատասկները այնքան դիպել, այնքան թակել
էին, որ լաշը վերբերով լցուած բորոտի լաշն էին դարձրել,
թէև ցամաքած մարմնից նուազ արեան հետքեր միայնակա-
տում էին գոյացած սպիւնների բերանին. նրա մէջքը կռացել
էր կմախքի պէս, իսկ արևած շնքի կաշին վեր էր կացել
չոր կեղևի պէս, բայց նա, սյնուամենայնիւ, լղար ու չար
եղան նման դարձեալ շարունակում էր քաշել, աշխատել:

Մինչդեռ սովորական չափով երեսուն տասնեակն այն
մահաշունչ, փակուած հովտի խորքում, ուր անապատի նը-
ման զովացուցիչ մի կաթիլ ջուր էլ չկար, լաւ հնձողը
հինգ օրում պիտի հնձէր միայն, նա, իւր արնանուազ բազ-
կով կէռ մանգաղի բերանից սև սրտով կրակ թափելով, օ-
րական վաթսուն խնձան տեղ հարիւրը կապեց, որ ինչ է,
ժամանակին գնար իւրն էլ հնձէր, ապա թէ ոչ, կկծէր,
կփչանար ու թռչունների միայն կերակուր կդառնար:

— Էն երկու օրավար գարովը պէտքա պահեմ ընխէքս՝

նրանով պէտք առաւ քննարկել, կոչ ու բեգիւղի ու պարտքատիրոջ ջուղարքը, ընկեր որ կ'ընդունէր, հնձիւն բռնումս փշրուէի աչքերիցըս պէծեր թափի, ես էլ ոնց անեմ, ասում ու հայ էր տալիս Մէջումը. բայց, վերջին օրն այնքան թլացել էին նրա բաղաւթները, որ, թէ և շարժում էր, սակայն ակամայ: Նա այդ օրը ոչ նախաձաշել էր և ոչ ճաշել, քացախն ու սխտորը սպասում էին գուգում, բայց նրա ախորժակը պինդ փակուել էր և մի բանից զգուշացնում էր շարունակ թրոտում էր շուրջը ու ճիւղկոտալէ ասում ինքն իրեն. «Ու՛րի, ջանս վեր առել ա, սիրտս էլ էրւում ա կրակի պէս»: Կարծես թէ մահը պտտուելիս լինէր գլխին, այնպէս տեսար էր դէմքը և ամպած սիրտը:

— Ա՛խ, էս ինչ մտաւ սիրտս, որ սհէ պինդ շանջու ա տալի,— ինքն էլ կասկածելով իւր դրուծեան վրայ, մէկ-մէկ սիրտը տրորելով ու դէմքը կնձուելով շանջում էր նա,— չնի թէ ընտանեացը որ անթուց ջուր խմեցի ընդուցի զատ բհամ եկաւ սրտըմս: Ու՛րի, թողեմ գնամ, թէ էս միքանի բուռն էլ կապեմ ու ետոյ...

Հէնց այդ մտքի վրայ էր խեղճը, որ յանկարծ գունատուեց, լըքաց ու ձէնը փորն ընկած վայր ընկաւ տեղը. նա խոտերից բռնելով աշխատեց վեր կենալ, չկարողացաւ. ապա սկսեց մէջքը կոտորած լորտուկի պէս փորի վրայ սողալ դէպի դարսած տասնեակի ստուէրը, ուր գտնուում էր նրա գուգին: Նա մի կերպ այնտեղ հասաւ, շուռ եկաւ մէջքի վրայ փորը ինչ շունչ բաշեց և ապա օձի շանթածի նման յանկարծ սկսեց հարստ կանչել:

— Ա՛հ, մե՛ռայ, այ՛ հաւատար, մե՛ռայ, մի կաթիլ ջուր, էրուեցի՛ր, էրուեցի՛ր, թէ Աստօծ կսիրէք, բեօմակ արէք, մե՛ռայ, էրուեցի՛ր...

Այդ աղէկտուր ձայնը սարսափ տարածեց նրա շուրջը:

— Ա՛, էն ի՛նչ ձէն ա, աղէրք. մի հլա սո՛ւս կացէք տե՛նանք,— հանդի հնձուրների շարքերը կանգ առան, իսկոյն ականջները այն փոսի կողմը դարձրին, ուր Մէջումն ընկած օգնութիւն էր կանչում:

— Ա՛հա, ի՛նչ էր կաղնել թմաշ անըմ, վա՛ղ տուէք, է,— մէկը, հեռու, բայց մի բարձր թմբի գլխից աւելի շուտ տեսնելով ընկածին, ձայն տուեց. — հրէ՛, հրէ՛ փէնջաքի տակին, փէնջաքի տակին...

—Ա՛, ինչ ասում ա՛:

—Ասմա Մէջըմն ա, վեր ա ընկել փէնջաքի տակին, այս խօսքերը իւրար հաղորդեցին ամենքը և վաղ տուն դէպի մահուան առաջին հարուածն ստացած Մէջըում ապին, որը հասնողներին սկսեց աղաչել և խնդրել:

—Ձեզ մատաղ, ես մեռնում եմ, ինձ Սարգիսին հասցրէք, նրան բան եմ ասելու:

—Ա՛յ, ինչ կայ բեղանում, որ անուահ ես լել:

—2է՛ ձեզ մատաղ. Մրդանց Ալեքսանի պէս սրտիցս ա կալել, սպանիլ տի, տարէք ինձ:

—Ա՛, վախիլ մի՛, շոգով ես ընկել, վախիլ մի՛. քու բաղդիցը դալլաքն էլ ըստի ա, հրէս խզիտակիցդ արին առնի թէ չէ, լաւանալ տես,—բաջալերելով երեսին ու կրծքին ջուր տալով, ասում էին նրան շրջապատողները:

—Ա՛յ. հըմի որ պրծած ես, եկաւ դալլաքը: Ա՛յ, դալլաք. նաշտարդ վրէդ ա՛. արին, արին:

—Ո՛րտիան ա վրէս, տանն եմ թողել,—ձեռը գըրպանը կոխելով պատասխանեց դալլաքը,—թի՛ւ. ասա բի՛, է՛, խու ծանդրութին չի անում:

—Բա ո՛նց անենք, սա ըռնաբան ա, մարդն ըռնով ա ընկել:

—Ա՛, ցէրը սուր դանակ չունէք:

—Ունեմ, ունեմ. ըհը՛:

—Էդ ա լմւ ա, իստու, իստու,—դանակը մէկի ձեռից առնելով դալլաքը, տարաւ խրեց խեղճ Մէջըումի ծոծրակի երակներից մէկի մէջ և եղած արիւնն էլ նա՛ քամեց:

Հետզհետէ նորանոր հարայահատներ էին գալի, բայց ի զուր, անգուլթ մահը եկել էր թւականել աղքատին, իսկ հոգիառն արդէն մտել էր նրա աղքատիկ խրճիթը, որի առաջ անմեջ և անհոգ գառների նման քարուքոփերի ետևից ընկած խաղում էին հինգ անչափահաս զւրաց երեխաներ, իսկ նրանց անբաղդ մայր Սարգիսը վեցերորդը ծծին կրծքից կպցրած, եթներորդն արգանդում, ծառի տակ նստած գոքում փիփերթ էր հընարում, որ ջարդուած-փշուրած Մէջըումի չոր պատառը թրչելու համար երեկոյեան ուտելիք պատրաստի:

Հայ-քրիստոնեայ Մէջըում ապինի խրճիթը, որ ո՛չ սող-խաղբ ունէր, ոչ էլ սրահ, գտնուում էր գիւղի գիմացում

մի առանձնացած տեղ, որը կարծես խմբից հեռու կանգնած՝ խճուղված երեխայ լինէր։ Բայց նրա հօրից մնացած տունն այդ տեղ չէր, գիւղամիջու մէջ էր, մի պարտեզ էլ առաջին. սակայն, հարեւան վաշխառուն իւր բակը լայնացնելու համար, երաշտի, սովի, հարկի և կեանքի ուրիշ նեղ ընկճումներին օգուտ քաղելով հանգամանքից, մի խան կորեկ, հինգ խան (խանը 12 գրովանքոց է քաշում) ցորեն կամ գարի և կամ մի քանի շահի փող տալով ձեռք ծոցում պաղատող աղքատին, կամաց կամաց, կտոր-կտոր, իբրև տուածի տոկոս, յափշտակել, Մէջլումի լայն տեղը խիստ նեղացրել էր, ուստի նա էլ մնացածը մի խոզի հետ փոխելով դուրս էր եկել այնտեղից և արեւակէզ մի լանջի կոնստակ մտել եթիմ ուլի պէս։

Գիւղացիք Մէջլումի խրճիթին ճարճուտի գորտան պիւն (բուն) էին անուանում ծաղր անելիս և կիրակի չըկար, որ այդ ծաղրով չզուարճանային։ Գորտան բնի հանդէպը մի ուսաւոր բլուր կար կանգնած, որի վրայից եկող ճանապարհն իջնում ու անցնում էր խրճիթի մօտով, այնպէս, որ եթէ մարդ բարձրանար բլրի գլուխը, առաջին անգամ կնկատէր խրճիթի դռները, որ դէպի նա էր նայում։

Արեգակն արդէն մայր էր մտել և արեւազուրկն ընկել խրճիթի վրայ, որ յանկարծ բլրի կատարից մի օտարօտի խօսակցութիւն սկսուեց և հէնց առաջին ձայնը գնդակի նման զիպաւ խեղճ Սարգիւլի ականջին։

— Ո՛վ վէ, խղճի կնիկը հրէ դռանը նստած։

— Սրտաճաք ա ըլացուք, որ տենայ։

— Գլուխը բարձր բռնի, Սիմոն ապի, կախ մի՛ գցիլ։

Այս անորոշ խօսքերը Սարգիւլի սիրտն ահագեցին. նա փիփերթի թւերը ձեռին մի առ ժամանակ նայելով ճամպին, մնաց ականջ դրած, մինչև որ էլ բան լսէ։

— Ադա, Սիմոն, էդ ո՞վ ա, էդ ի՞նչ ա լել, — այգուց հարցնելով, չափարը կոխեց, դուրս եկաւ մէկը և հետաքրքրութեամբ ետեւներից հասաւ։

— Մրդանանց Մէջլումի ա, ո՞վ ա, — տխուր պատասխան տուին նրան։

— Վա՛շ, խեղճ Մէջլում. էս ի՞նչ ա լել։

— Տուր ա դիպել, արին առան, ամա չ'օգտեց։

—Վա՛շ շէ՛: Մէջլը՞մ, ա՛, ի՛նչ ա, եդ խի ես տհէ լել, երեսին անոյս հայեացքով նայելով՝ հարցրեց մօտեցողը, դեռ չիմանալով նրա համրացած լինելը:

—Լեզուն կապուել ա, կապուել. կարըմ չի խօսայ, —տերուութեամբ ասացին բերողները և երկու ձողի վրայ դադաղի նման վերցրած, Մէջլումին ճանապարհից դուրս բերելով առաջների փոսով թերուեցին դէպի նրա խրճիթը, ուր Սարգիւլը դեռ երկիւղով յափշտակուած կարծում էր, թէ երազում է. չէր հաւատում իւր ականջներին, բայց երբ նրանք փոսից խրճիթի դիմաց դուրս եկան կրկին, և երբ Սարգիւլը տեսաւ իրողութիւն է, ծծկերին կրծքից դէնը շարտեց, կարիճի շանթածի նման վեր թռաւ տեղէն և «բու-նըն օձ մօած ղուշի պէս թաթաչհար գալով», իրեն բազկ-արձակ նետեց ներքև և այնտեղ գլխին տալով, սկսեց մա-զերը փետել ու երեսն արնաթաթախ անել եղունկներով:

Վա՛յ, ամա՛ն հա՛րահէ՛յ. ջնազա կապած եդ ո՛ւմ էք բե-րըմ. մի տուն քիւլֆթատեր աղքատին. վա՛յ, վա՛յ, —ասում ու կրկին և կրկին տալով գլխին, պողպտ էր գալիս շուրջ-ները, մինչև որ անզգայ հիւանդին վեր դրին խրճիթի առաջ:

Սարգիւլը չոգեց ամուսնու կողքին, կուռը վզի տակը տալով բարձրացրեց գլուխը և սկսեց լալով հարցնել:

—Էդ ի՛նչ ես լել Մէջլըմ ջան, եդ ի՛նչ ա բու հալը. ասա մի տենամ:

—Վա՛ւ, —այդ միայն լսեց Սարգիւլը և նորից սկսեց վայ տալ:

—Վա՛յ. բողանամ, կուրանամ ե՛ս, վա՛յ, բեանից իտը ապրիլ չեմ ե՛ս, ինձ ջուրը կգցեմ, ինձ սարին ու քարին կտամ, վա՛յ, —երեսը երեսին դրած չէր ուզում մխիթա-րուել նա, իսկ Մէջլումը, որոյս ունէր բաց լեզուով տուն հասնի և նրան մի բան ասի, միայն պէլ-պէլ նայում էր ե-րեսին, որով աւելի ևս պրում էր նրան: Մէկ-մէկ նա թոյլ մատները տատանում էր օդում, բայց չէր հասկացում, թէ ի՛նչ է ասում և կամ ի՛նչ ուզում: Բայց աւելի սոսկա-լի և սրտաճմլիկ էր մանաւանդ այն տեսարանը, որ երե-խայքը՝ մէկը ոտը բաց, միւսը ոտն էլ, գլուխն էլ, երրոր-դը բոլորովին մերկ, չորրորդը և հինգերորդը լանթ շապիկ-ների կեղտոտ օղակները միայն շէնքներին ժողովուել էին:

շուրջը և մօր արտասուածքից աչքերին ու ճնոցին նայելով, որք եղնիկների պէս վիզներն ուսներովը ձգած լալիս էին սվսուռալէ: Բայց շատ ժամանակ չանցաւ, մի ժամից յետոյ Մէջլուսն արդէն աչքերը փակած շնչում էր բոլոր ուժով և մեռելագունած ճակատից շաղի նման մահուան սառը քրտինք տալով հետզհետէ թլանում էր ամբողջ մարմնով: Իսկ իրեն ձեւատող արնաթաթաղ Սարգիւլը մի ձեռը նրա ճակատին դրած, միւսով շօշափելով սառչող ուները, նայում էր երեսին խիստ անյոյս, անմխթար և բռունցքը վրա բերելով խելագարի նման, ջարդում, փշրում էր իւր գլուխն ու յօնքերը և մեղետու նման տխուր եղանակելով իւր դառը սուգը, փլում էր շրջապատողների բոլոր սիրտը:

— Վայ, Մէջլում ջան. խալիւր կհնձեն, կփնջեն՝ կեռ, կեռ դիզան կդնեն— կա՛լ կկասեն հօռօյով, ես, եթիմիդ ետեւիցս արած դուռն է դուռ ման կգամ սգալով: Որմին պահեմ, որին հագցնեմ, որին ուտացնեմ, օխտը եթիմ երկու ըրավար գարի ա մնում, ընէլ հնձիլու՝ ոտի վրայ կադնած հանդըմ. վայ. վայ վայ վայ,— ողբում էր ու փշրելու չափ ծնկներին ամուր զարկում: Գեղջկուհին այդ բոլորն անուամ էր այնպիսի անկեղծ զգացմունքով, որ ձայնը հասնելիս մարդ կարծում էր, թէ ապառաժի կտորներն անգամ արտասուում են անշուշտ:

— Ախ, Աստօժ,— աչքերը երկնք յառելով գոչում էր նա,— եանի ինչ կլինի, որ հլէ էս խեղճ ու նաչար րեխանցս էլա ողորմաս. կերածները չոր ու ցամաք ճաթ էր, ընդուցի էլ են զրկւում. բա ես էլ ո՛ւմից ողորմութիւն ուղեմ:

Արդէն մուծը կոխել էր. գոներից ու հանդից խըրձիթ մտնողները ձեռները ծոցներին սգազգեսաց կանգնել էին շնչող մարմնի առաջ, բայց ոչ մէկը օգնութեան հասնել չէր կարողանում. ամենքի աչքը նայում էր նրա բերանին, որ շուտով ոտների ու ձեռների չրմխելու հետ միմիայն մի անգամ բացեց և անխորհուրդ ու անհաղորդ մի պէս յաւիտեան հանգաւ:

— Վայ,— հոգին տալիս երկնքի չափ բարձր ծղրտաց Սարգիւլը և իրենից գնաց, նուաղած, ճապաղած ընկաւ գետին. կանայք վրաթափուած ամանները ձեռներին Սարգիւ-

լին ջրով ետ էին բերում ճըշալով, իսկ աղամարդիկ մերկացնելով հանեցին Մէջլումին լանթերի միջից, մեկնեցին նրան յատակի վրայ և կռնեքը խաչելով, խփեցին աչքերը և մի կռտ, կեղտոտ կապերա, որ ամբողջ ընտանիքին վերմակի տեղ էր ծառայում, երեսովը բաշեցին և մի պէնձիկում երկու պողոտնց խուկնի ծխեցին նրա հոգու համար:

Կ. գիւղացիք, ճիշդ վայրենիների նման վարքները կուրիտ, անհաշտ ու անտաշ ժողովուրդ էին. մէջները ոչ դարբին կար, ոչ որմնագիր, ոչ կարգին դալլաք և ոչ տէրտէր, մի խօսքով որ ասենք, ամեն բանից զուրկ էին. ոչ ոք իր երեխին իրենց հանգից դուրս ոչ մի տեղի կամ քաղաքի կողմը չէր ուղարկում, որ գնայ մարդ տեսնի, մարդ դառնայ: Այդ գիւղում միայն խողարածների առատութիւն էր, ՚ի բաց առեալ մի քանի վաշխառուների, որոնք խճուղու և կամ ուրիշ գործերի Վիտորաթէիկութեամբ պարապելով՝ փող դիզելու և ժխտութեան մէջ վարժուելով, ատամները սրած մտել էին գիւղն ու բնակութիւն հաստատելով խորխահան էին անում խեղճ աղքատներին:

Ծոնդեան, մկրտութեան, մահուան և այլ ծիսակատարութեան համար Խասեցոց պէս շարունակ ուրիշ գիւղի երէցի ետեւից էին քաշ գալիս:

— Էս գեղն անիծած ա, ինչ տէրտէր օննիլ ենք տըւել, կցեւ չի, մեռել ա, — փսլինքները շաղ տալով պատասխանում էին նախատողին:

Առաջին անգամը չէր, որ այն գիւղում մեծ կամ մանուկ խեղճ Մէջլումի պէս հաղորդի էլ էր հասրաթ մնում, պատարագի էլ: Շատ ու շատ անգամ դադաղի ետեւից գնացող սգւոր որդին հօր հասցէին այսպէս էր ուղղում իւր ողբերգը:

— Վայ, պատարագի հասրաթ ապի ջան, վայ. եդ ուր ես գնում, չլէ կցար ոչ թէ մի պատարագ էլա անեմ. վայ, վայ ապի ջան, պատարագի հասրաթ ապի ջան...

Ամառնէն օրը խեղճ Մէջլումի դին պիտի հոտեր, եթէ հարւան գիւղի տէրտէրն էլ սատանի ձին թամբէր: Կ. գիւղը ժամանակաւորապէս հովուողը Մ. գիւղի ծխատէր քահանայ տէր Սոկոնն էր. նրան տէր Սոկոնն էին ասում, որովհետեւ թեփշու կամ չորացած սոկոնի նման մի գլխարկ ունէր ութ տարի վեց ամսական. այն գլխարկը երկնից պա-

տուհաս էր դառնել տէր հօր գլխին, նորն էլ չէր ուզում գնի. ասում էին. «վախում ա, թէ առնի, ընէլ ընդուր պէս խարաւ լի»։ Այդ տէրտէրի խոյուխասիաթիցն էլ կրակում էին մնացել գիւղացիք. իծաններ ունեցողի պէս մի անգամ խնդիրներն ընդունում, մարդավարի գալիս էր. ծէսը կատարում, միւս անգամ Աստուծոյ պատիժ դառնալով բարով բոլով էր գցում նրանց Շէն գիւղի տէր Քոստկի պէս։^{*)}

Մ. գնացող մարդուն, Մէջլումի բաղդիցն էր երևի, չէ չ'ասեց տէր Սոկոնը, բայց հէնց խրճթի դրանը ձիուց իջնելուն պէս երկու մանէթ թաղմը հակի պարտքն էլ նա դրեց Սարգիւլի վզին։

Տէրտէրին տեսնելով մի քանի գիւղացիներ, աւելի ծերերը, եկան, հաւաքուեցին խրճիթը և միմայն ջրակալած աչքերով արտայայտելով իրենց զգացմունքը, կանգնեցին դիակի շուրջը, բայց խաթէն այն էր, որ խեղճ Մէջլումի համար պատանք առնող չէր եղել և կանգնածներից էլ ոչ ոք սիրտ չէր անում կամ կողակներին չէր ղմշում, որ ծախսի։ Այդ դժուար բոլակին գիւղի միակ դուքանին այնքան բարի դտնուեց, որ երեք ամսէն ժամանակի՝ շահը վրէն գալով, մի մանէթ ապառկով երեք գազ կտաւ տուեց և իւր երկար ձևի խորհրդաւոր դաւթարուճի էլ սև թանաքով նշանակեց։

Վերջապէս աղքատ Մէջլումի արժանացաւ թաղուելու։ Նրան դրին երկու նշանափետերի (նշանափայտ) վերայ, տէրտէրը «Ջարհուրեալ դողան»-ն սկսեց, առաջ ընկաւ, մարդիկ ուսներն առան ննջեցեալին, իսկ Սարգիւլն սկսեց իրեն խրճթի պատերին խփել և ապա երեխանց թաթը բռնած վայ տալ անմխիթար։

— Վա՛յ, բա որ գնում ես, մեր արտն ո՞վ դի հնձի՛լ, — սրտաճմլիկ ձայնով ետևից աղաղակում էր նա։

Այդպէս, անշուք, անդադաղ Մէջլում ապինին տարան խորն ու խոնաւ գերեզման իջեցրին, ուր նա հանգիստ քնեց յաւիտեան և վերջապէս ազատուեց փուչ աշխարհից ու փուչ մարդկանցից։

Թ. ՍԱՐԳ. ԾՈՒՂՈՒՐԵԱՆԾ

*) Տես «Մոռացուած աշխարհի» գ. գրքում։